ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ՈՐՈՇՈՒՄ

14 ապրիլի 2017 թվականի **թիվ 6** քաղ. Բիշքեկ

Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ տալու մասին Մոլդովայի Հանրապետության դիմումի վերաբերյալ

Հաշվի առնելով Մոլդովայի Հանրապետությանը Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ տալու հարցով Մոլդովայի Հանրապետության նախագահի դիմումը՝ «Եվրասիական տնտեսական միության մասին» 2014 թվականի մայիսի 29-ի պայմանագրի 109-րդ հոդվածին համապատասխան, Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհուրդը **որոշեց**.

1. Ողջունել Մոլդովայի Հանրապետության՝ Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակ ստանալու մտադրությունը:

2. Եվրասիական տնտեսական հանձնաժողովին՝ սահմանված կարգով անդամ պետությունների հետ համատեղ մշակել եւ Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի հերթական նիստի հաստատմանը ներկայացնել Եվրասիական տնտեսական միությանն առընթեր դիտորդ պետության կարգավիճակի մասին Հիմնադրույթը:

3. Կայացնել որոշում Մոլդովայի Հանրապետությանը դիտորդ պետության կարգավիճակ տալու մասին՝ սույն Որոշման 2-րդ կետով նախատեսված Հիմնադրույթը հաստատելուց հետո:

4. Սույն Որոշումն ուժի մեջ է մտնում դրա պաշտոնական հրապարակման օրվանից:

Եվրասիական տնտեսական բարձրագույն խորհրդի անդամներ՝

Հայաստանի Հանրապետությունից՝	**Բելառուսի Հանրապետությունից՝**	**Ղազախստանի Հանրապետությունից՝**	**Ղրղզստանի Հանրապետությունից՝**	**Ռուսաստանի Դաշնությունից՝**